


212

3389

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐԻ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՅԵՐ

ԾՐԱԳԻՐ

ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ
ՀԱԿԱԿՐՈՆԱԿԱՆ
ԽՄԲԱԿՆԵՐԻ
ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՄԱՐ



ՀՐԱՍՏԱԿՈՒԹՅՈՒՆ

Հ.Կ.(Բ)Կ. ՅԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԵՅԻ ԱԳԻՏ-ՊՐՈՊ ԲԱԺՆԻ

ՅԵՐԵՎԱՆ — 1928

23 SEP 2009

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՇ

215

5-89

ԾՐԱԳԻՐ

$$\begin{array}{r} 1003 \\ \times 13615 \\ \hline \end{array}$$

ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ ՀԱԿԱԿՐՈՆԱԿԱՆ ԽՄԲԱԿՆԵՐԻ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ

ՀԱՄԱՐ



Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Ո Ւ Թ Յ Յ Ո Ւ Ի Ն
Z.4.(Բ)4. ՅԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԵՅԻ ԱԳԻՏ-ՊՇՈՊ ԲԱԺՆԵ
ՅԵՐԵՎԱՆ — 1928

ՏՊԱՐԱՆ ՀԵՐՄԵՍ
ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒԹՅԱՆ,
ՄԱՐՔՍԻ ՓՈՂ. № 29
ԳՐԱՌԵՊ. 589բ
ՏԻՐԱԺ 1000.

Ծ Բ Ա Գ Ի Բ

ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ ՀԱԿԱԿՐՈՆԱԿԱՆ ԽՄԲԱԿՆԵՐԻ
ԴԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Սույն ծրագիրը նշանակված է գյուղացիների նախնական տիպի հակակրոնական խմբակների համար և այնպիսի հաշվով է կազմված, վոր խմբակում մասնակցելու հնարավորություն ունենա նաև անգրագետ քնագիտության գիտելիքներին անծանոթ գյուղացին: Բոլոր թեմաները մշակված են գյուղացիական գուարանի պահանջներին համապատասխան: Ծրագիրն անցնելիս՝ ղեկավարը պետք է նկատի ունենա այդ մոռմենտը և, իր կողմից, յուրաքանչյուր թեմայի մշակումը լրացնի տեղական նյութերով. դա վերաբերում է գոչ միայն պատմա-հասարակական այլև բնագիտական թեմաներին: Ծրագրի յուրաքանչյուր թեմայում ընդգծվում է բոլոր կրօնների գասակարգային շահագործողական ղերը: Ղեկավարին և մնում այդ թեղիսը տեղական կոնկրետ նյութերով վավերացնելու խնդիրը:

Պարապմունքներին, ի հարկե, զ ը ու յ ց ի ձև պետք է տալ: Ծրագրում յուրաքանչյուր թեմայից հետո, բերված է ղեկավարի և խմբակի անդամների համար անհրաժեշտ գրականության կարճառություն ցուցակ: Ինքնը ստիճանքյան հասկանալի յե, հաղիվ թե հնարավոր լինի այնպիս կազմակերպել պարապմունքները, վոր խմբակում մասնակցողները նախորոք կարդան մատ-

նանշված գրականությունը (պետք եռ ուշադրության առնել այն հանգամանքը, վոր խմբակում կարող են և անդրագիտաները լինել), — զա, ի հարկե, ցանկալի յերբայց վոչ պարտադիր: Գրականությունը բերված երգիսավորապես, այն նկատառումով, վոր դեկավարը կարողանա հանձնարարել դա խմբակում մասնակցողներին՝ հետագա ընթերցանության համար: Ահա թե ինչու գրեթե միշտ մի քանի գիրք ե մատնանշված: Ծրագիրը բաղկացած ե 13 պարագմունքից, վորից ինը նվիրված ե պատմահասարակական հարցերին, իսկ չորսը՝ բնագիտական հարցերին: Շաբաթական մեկ պարագմունք ունենալու դեպքում՝ 4—5 ամսում կարելի յե ավարտել ծրագիրը:

Ծ Բ Ա Գ Բ Ի Ս Խ Ե Մ Ա Ն

1. Գյուղացիությունը և կրոնը;
2. Ում ե հարկավոր հավատալ աստծուն;
3. Աստվածն ե արդյոք ստեղծել աշխարհը, և ինչ են բնության որենքները;
4. Կյանքի և մարդու ծագումը;
5. Կրոնը և բժշկականությունը;
6. Հարկավոր ե արդյոք աստծու ոգնությունը գյուղացուն նրա տնտեսության մեջ:
7. Ի՞նչպես և ինչու յե առաջացել մարդկանց մեջ հավատքը:
8. Քրիստոնեյությունը և վոչ-քրիստոնեյական կրոնները;
9. Յեղել ե արդյոք քրիստոս և ինչպիս և յերեվան յեկել քրիստոնեյությունը:

10. Ովքեմը են աղանդավորները;
11. Գյուղի սոցիալիստական շինարարությունը և պրոնը:
12. Կրոնը և գյուղական կենցաղը;
13. Անաստվածների միությունը և նրա խնդիրները գյուղում կատարելիք հակակրոնական աշխատանքի բնագավառում:

1-ին ՊԱՐԱՊՄՈՒԽՖ

Գյուղացիությունը յեկ կրոնը

Գյուղացիությունը վորպես ամենակրոնապաշտագագասիրէց մեկն անցյալում և ներկայում: Գյուղացու կրոնապաշտության պատճառներն անցյալում: Գյուղացիական միայնակ տնտեսության անզորությունը բնության տարերային ուժերի առաջ և գյուղատնտեսական տեխնիկայի թուլությունը: Զնչին քանակությամբ հողաբաժնները (համեմատել կալվածատիրական և վանական հողատիրության հետ): Մանրգյուղացիական առանձին տնտեսությունների մեջ գյուղատնտեսական կատարելագործված մեքենաներ կիրառելու և ընդհանրապես ժամանակակից զիտության զանազան նվաճումներն ոգտագործելու անկարեւիությունը:

Գյուղացու շահագործումը մինչև հեղափոխությունը (կուը և բահրան ճորտատիրական իրավակարգում, ճորտատիրական շահագործումը վանքերի միջոցով, առուրբագործումը 1861 թվականից հետո, ճորտատիրության մնացորդները գյուղում, գյուղացու շահագործումը քաղաքային կապիտալի միջոցով): Զքավոր-

ների շահագործումը կուլակների միջոցով (կուլակ-գը-նորդներ, վաշխառու կուլակներ): Գյուղացու անզորությունը շուկայի կույր ուժերի հանդեպ: Գյուղացու քաղաքական իրավադրկությունը կալվածատերերի ե-գործարանատերերի դիկտատուրայի ժամանակ: Գյու-ղացին վորպես մանր արտազրող-սեփականատեր, և այս հանգամանքից բղխող նրա դասակարգային թու-լությունը: Այդ անտեսական և քաղաքական պատճառ-ներից բղխող գեղջկական հոգեբանության հիմնական-գծերը: Պահպանողական մտածելակերպի հակում, ակ-նածություն հնի՝ պատեհական սովորութների և պատվիրանների հանդեպ: Բնության և հասարակու-թյան անըմբոնելի ուժերի հանդեպ անողնական ու անդոր լինելու զգացմունք, Հավատք դեպի աստվածա-յին նախախնամությունը, վորի հանդեպ իրը թե ան-դոր են մարդիկ: Գերբնականին՝ աստծու և նրա սըր-բերի ոգնության դիմելը: Գյուղացիական խավարն ու-տիտիպությունը վորպես կրոնական ամեն տեսակ նա-խապաշարութիւնն ուժեղացնող և ամրացնող պայման-ներ:

Միայնակ-գյուղացու մանր ապրանքային տնտե-սությունը, գյուղի մասնակի շերտավորումը, անկազ-մակերպվածությունը, տեխնիքական հետամնացությու-նը, անկուլտուրականությունը և աղքատությունը— վորպես գյուղացիության կրոնական տրամադրու-թյունների պահպանման հիմնական պատճառներ ներ-կայում: Սոցիալիստական շինարարությունը վորպե-անսասվածության տարածման գործուն: Գյուղի սոց-իւլիստական շինարարության ուղիները—կոռակա-ցիան, տնտեսության կոլեկտիվացումը, գյուղատը-

տեսական աշխատանքի մեքենայացումը: Գյուղի ելեք-տրիֆիկացիան: Գյուղի և քաղաքի միջն բացված ան-դունդի աստիճանական վոչնչացումը: Կուլտ-կրթական աշխատանքը: Անաստվածության աճումը գյուղացիու-թյան մեջ: Կրոնը վորպես սոցիալիստական շինար-առության արգելակ: Կուլակների դերը յեկեղեցական խորհուրդների և աղանդավորական համայնքների մեջ: Կրոնական կազմակերպությունների հակագղեցությու-նը խորհրդային գյուղի կուլտուրական և տնտեսական շինարարության վրա: Անաստվածություն քարոզելու և անաստվածների միություններ ստեղծելու միջոցով կրոնի դեմ պայքարելու անհրաժեշտությունը:

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՄՈՒԽՆՔՆԵՐ

Սույն թեմայի նպատակն ե—պարզաբանել գյու-ղացու կրոնապաշտության պատճառները և այն պայ-մանները, վորոնք նրան անխուսափելիորեն դեպի ան-աստվածությունն են առաջնորդում: Այստեղ առանձ-նապես անհրաժեշտ ե ամեն կերպ խուսափել այսպես կոչված «կրթական» թեքումից,—անհրաժեշտ ե ընդ-գծել այն հանգամանքը, վոր գյուղացու կրոնապաշ-տությունը չպետք ե բացատրել նրա տգիտությամբ և հետամնացությամբ միայն, վոչ ել նրա տնտեսության տեխնիքական հետամնացությամբ: Անհրաժեշտ ե քըն-նել գյուղացու գյուղացիան տնտեսական բոլոր պայ-մանները և, առաջին հերթին, նրա մեկուսացած դրու-թյունը, արտաքին աշխարհի հետ ունեցած կապերի թուլությունը և արտադրության կոլեկտիվ սկզբունք-ուրի բացակայությունը, վորոնք նրա անողնականու-

Թյան հիմնական պատճառներն են հանդիսանում, և սրանով բացատրել նրա հակումը դեպի միստիկան ու նրա կրոնապաշտությունը:

Վերջացնելով այն հարցը, թե ինչպիսի պայմաններ և ինչպիսի որյեկտիվ պատճառներ են, վոր ստեղծել են գյուղացու կրոնապաշտությունն անցյալում, անհրաժեշտ ե անցնել նրա գյուղացիան նոր, փոխված պայմանների վերլուծությանը պրոլետարական դիկտատուրայի ժամանակ, Այսուհետև անհրաժեշտ ե ցույց տալ թե ինչպես չքավոր ու միջակ գյուղացու այդ նյութական պայմանների փոփոխությանը հետեւում և նաև մտածելակերպի փոփոխությունը, Մենք պետք ե համեմատենք գյուղացու նախկին դրությունը նրա ներկա դրության հետ և ցույց տանք նրա կրոնապաշտության խորտակման որյեկտիվ նախադրյալները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՄԱՐ

«Мысли Ленина о религии». Հրատ. „Атеист“, եջ 9—33, լգլ. «Գյուղացիությունը և պրոլետարիատը»:

ԽՄԲԱԿԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

„Крестьянский антирелигиозный учебник“. 1 պարզմունք, հրատ. „Безбожник“-ի,

Ярославский—«Религия и РКП.», հրատ. „Безбожник“-ի, եջ 37—43:

— «Библия для верующих и неверующих», մասն I, գլուխ II:

Шестаков—„Что дала крестьянам Октябрьская революция“, Москва, 1925թ. 2 հրատ., եջ 31; Нейман Ч.—„Как жили крестьяне при помещиках“, եջ 60:

Հ-ՐԴ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

Ում ե հարկավոր հավատալ ասծուն

Ամեն տեսակ կրոնների ոգտագործումը շահագործող դասակարգերի կողմից՝ աշխատավոր մասսաներին շահեցնելու համար: Տորտատիրական կարգերի և ինքնակալության սրբագործումը յեկեղեցու կողմից: Ուղղափառ և լուսավորչական յեկեղեցիները գյուղացիական ապստամբությունների դեմ պայքարելու գործում: Ստեղծան Ռազինի և Պուգաչյովի ապստամբությունները, գյուղացիական ապստամբությունները կալվածատիրական դաստակերտներում, 1905 թվականը: Ցեկեղեցին ի սպաս հականեղափոխության՝ քաղաքացիական կրիմսերի ժամանակ՝ Ռուսաստանում և գաշնակցական կառավարության որոք Հայաստանում: Թե ինչպես են ոգտագործում կրոնն իմակերիսալիստները՝ գաղութային և կիսագաղութային յերկրները ճնշելու համար: Կրոնի ոգտագործումը ցարական Ռուսաստանում և բուրժուական յերկրներում՝ բանվոր դասակարգի հեղափոխական շարժման դեմ:

Կրոնը վորակես հեղափոխական շարժման դեմ պայքարելու նպատակով ազգային ատելություն հրահեկելու մի միջոց՝ Ռուսաստանում նախքան հեղափոխությունը և արտասահմանում՝ ներկայումս: Լուսա-

Վորչական յեկեղեցու ոգտագործումն դաշնակցականների և այլ ազգային կուսակցությունների կողմից՝ Խորհրդային Հայաստանի դեմ:

Կրօնն ի սպաս ներկա կուլակների և նեպմանական բուրժուազիայի, ի՞նչ է տալիս կրօնն աշխատավորությանը: Հանդերձյալ կյանքի վարձատրության վրա դրված սուտ հույսները: Աշխատավորների կյանքը, բարորությունն ու առողջությունը պայմանավորող բնական և հասարակական յերևույթների ֆանտասիկական բացատրությունը: Բոլոր տեսակի կրօնների քարոզը համբերատարության ու հեղության, սիրությունության մասին: Այս քարոզի շահագործական նշանակությունը:

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑԱԿՆԵՐՆԵՐ

Այս պարագմունքի նպատակն ե՝ պարզաբանել կրօնի դասակարգային գերը ժամանակակից հասարակության մեջ: Նախորդ պարագմունքի ընթացքում կրօնի մասսակար գերի մատնանշումը՝ մեր ունկը դրդի մեջ անխուսափելուն հետեյալ հարցը կհարուցանի—ինչու, ուրեմն, գոյություն ունի կրօնը, քանի վոր նա մասսակար ե, և արդյոք վորևէ մեկին ոգուտ չի բերում նա: Մենք պետք ե ոգտագործենք այս հարցը, վորպեսզի մեկ անգամ ևս ընդգծենք այն հանգամանքը, թե մենք կրօնի հարցը վերացականութեն չենք դնում: Մենք ասում ենք, վոր կրօնը հարկավոր չե չքավոր ու միջակ զյուղացուն, բայց մենք յերեք այդ նույն բանը չենք պնդում ունեորի նկատմամբ: Բացահայտելով այն կրօնական դավանաբանու-

թյունների դասակարգային եյությունը, վորոնք քարոզում են համբերատար, նեղ ու խոնարհ լինելու նկողների առաջ,—մենք պետք ե ընդգծենք, վոր հասարակական վորոշ դասակարգերի համար կրօնը ֆասադակար ե, մինչեւ մյուսների համար՝ միանգամայն անհրաժեշտ: Այստեղ ցանկալի յե պատմությունից որինակներ բերել, թե ինչպես հին ռեժիմի ժամանակ աիրող դասակարգերը կառչելիս են յեզել կրօնից և շարունակում են կառչել այսոր ևս Յեղուպայի, և Ամերիկայի մեզ շրջապատող բուրժուական յերկրներում, ինչպես նաև Արևելքում մասսաներին շշմեցնելու և հեղափոխության դեմ պայքարելու նկատառությունը: Հարկավոր ե նույնպես ամբողջ պարագմունքները այնպիսի մի ձեւի տակ, թե բոլոր կրօններն ել միանման դեր են խաղում, այսինքն՝ սպասարկում են շահագործող դասակարգերին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԵԿԱՎԱՐԻ ՀԱՄԱՐ

Рейннер—„Религия и классовые противоречия“, „Антисоциализм“ №№ 11 и 12, 1926 г.

Путинцев—„Гражданская война, нэп и религия“, „Антисоциализм“ № 11, 1926 г.

— „Церковь и 1905 год“.

ԽՄԱԿԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԸՆԹԵՐԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ
„Крестьянский антирелигиозный учебник“, 2-րդ պարագմունք:

Ярославский—„Религия и РКП.“, № 16—30:

Степанов И.—„Религия, духовенство, его доходы,

его проклятия и благословения“, VII--X գլ.^ւ
 Шейнман—“Бог служит богатым”.
 Бляхин П.—“Все ли служители бога верят в бога”,
 հրատ. „Безбожник“-ի
 Каңдидов Б.—“Обоготворение дома Романовых”,
 հրատ. „Безбожник“-ի

Յ-ՐԴ ՊԱՐՊԱՄՈՒՆՔ

Ասէլա՞ծն ե արդյով ստեղծել աշխարհը յեվ
 ի՞նչ են բնության որենիները

Ավետարանի ուսմունքն աշխարհի ստեղծագործության մասին: Ավետարանի յերկու տարբեր պատմը վարձքներն այդ խնդրի մասին: Աշխարհս վոչնչից ստեղծելու հնարավորության գիտական ժխտումը նյութի հավիտենականությունը և նրա շարժման հավիտենականությունը: Ի՞նչպես և պատկերացնում ավետարանը տիյեզերքի կառուցվածքը: Իրականության մեջ ի՞նչ և յերկինքը և ի՞նչ են յերկնային լուսատուները: Յերկիրը վորպես մոլորակներից մեկը և նրա ծագումը: Յերկրի ավետարանական տարիքը: Ի՞նչ ե ասում գիտությունը մեր յերկրի տարիքի մասին: Բնության և հասարակական կյանքի յերկություների ուրինականությունը: Հնարավիր են արդյոք հրաշքներ: Անըմբոնիլին և հրաշքը:

Վորևե ոգուտ ստանձւմ ե արդյոք գյուղացին աղթքից, և արդյոք այդ արդթքը նրան վաստ չի բերում:
 Ի՞նչ բան են սրբությունները: Մասունքները,

սրբապատկերները, սուրբ ջուրը, յեկեղեցական յոթխորհուրդները և ծեսերը—վորպես բնության բնական կարգի վրա ներգործելու մոգական միջոցներ (անկեզ մացառը—неопалимая купина և հրդեհներ, մաղթանքներ փոթորկի դեմք, դեղարդ և այլ մասունքներ գուրս բերել, հսկում, ժամպատարագ և այլն):

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ

Այս պարապմունքի նպատակն ե—առաջին ցույց տալ, վոր ժամանակակից գիտությունն ի վիճակի յերացատրել մեզ շրջապատող բնության յերեվույթները և յերկրի ծագումն առանց վորեն աստծու: յերկրութ՝ պարզաբանել աշխարհի ստեղծագործության ավետարանական պատմությունների հակագիտական բնույթը, անորոշությունը և վայրենուն հատուկ միամտությունը: Հարկավոր ե ցույց տալ վոր ավետարանը յերբեք արժանի չե այն հեղինակությանը, վորպիսին ունի նա հավատացյալների մեջ, և վոր կույր կը ունական գիտակցությունը միայն ավետարանական հեքյաթների մեջ իմաստ կարող ե գտնել:

Առանձին մանրամասնությամբ պետք ե կանգառներ հետազոտության գիտական մեթոդների վրա, նպատակ ունենալով ծանոթացնել մեր ունկնդիրներին այն հանգամանքի հետ, վոր գիտությունն ու հավատքը անպայմանորեն անհաշտելի յեն, և ցույց տալ թե հետազոտության ինչպիսի հաստատուն մեթոդներ ունի ժամանակակից գիտությունը:

Պարապմունքի ժամանակ անհրաժեշտ և ձեռքի

տակ ունենալ մի քանի ակնառու պիտույքներ՝ գլուխուս, դիապոզիտիֆներ, իլլուսարացիաներ, սլակադներ և այլն,

Այնպիսի հաշվով պետք ե անցկացնել այս պարագմոնքը, վոր վերջում հնարավոր լինի աստծու չգոյության մասին մի հիմնական յեղակացության հանգել:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԴԵԿԱՎԱՐԻ ՀԱՄԱՐ

Степанов—„Происхождение нашего бога“, պիտարանական պատմվածքն աշխարհի ստեղծագործության մասին;

Ярославский—„Библия для верующих и неверующих“ (կաև հայերեն) մասն I, I—III գլ., եջ 5—25 (ոլուսերեն հրատարակության);

Малинин—„История мира“, առաջին գլուխները, կամ **Заровнянский**—„Беседа с деревенской молодежью“, I և II գրույները;

Попов—„Происхождение земли и мира“, հրատար. „Безбожник“-ի;

ԽՄԲԱԿԻ ՍՆԴԱՄՆԵՐԻ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐ

„Крестьянский антирелигиозный учебник“, 3-րդ պարագմոնք:

Фридман—„Библейские чудеса и законы природы“

Գ-ՐԴ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

Կյանքի յեվ մարդու ծագումը

Ի՞նչ ե կյանքը, ի՞նչ ե որգանական նյութը, կենզանի որգանիզմի հիմնական հատկանիշները: Մարմինների քիմիական կազմը: Հոգեհղությունը կենդանի մարմինը: Գոյություն ունի հոգի: Ուղեղը և ներփային սիստեմը: «Հոգեկան» յերկույթների գիտական բացատրությունը, կրօնի ուսմունքը հոգու անմահության և մարմնի անցավորության մասին:

Որգանների և հյուսվածքների կյանքի մասին գիտության կատարած վերջին հայտնագործությունների և կրօնական ուսմունքի միջև յեղած հակասությունները: Հոգեկան յերկույթների կախումն որգանիզմի վիճակից: Քուն և յերազ:

Ի՞նչ ե սպասում մեզ մահվանից հետո: Հանդերձյալ կյանքի տերաերական ուսմունքը: Այս ուսմունքի դասակարգային իմաստը:

Ի՞նչպես ե յերեան յեկել կյանքը մեր յերկրի վըրա: Գիտության յենթագրությունները, թե կյանքի սկզբնական ձևերը գոյացել են ծովի հատակում: Առաջին բջիջը և միաբջիջ որգանիզմները: Բարձր տիպի կենդանիների և բույսերի բացակայությունը յերկրի ամենահին հողաշերտերում, կաթնասունների յերեան գալը: Մարդու և կենդանական աշխարհի արենակացական կապը: Մարդը և կապիկը մի ընդհանուր նախահորից: Ինչու ներկայումս կենդանիներից մարդիկ չեն ծնվում: Առաջին որգանիզմների եվոլյուցիան և տեսակների փոփոխությունն ըստ հանածո տվյալների:

Մարդու հանաձու նախնիքները: Մարդու և կապկի արյան կազմի և կմախքի կառուցվածքի ընդհանուր գլուխը:

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑԱԿՆԵՐ

Կյանքի ծագման հարցը հակակրոնական պրոպագանդայի տեսակետից նույնքան կարենը և, վորքան աշխարհի «սկզբի» հարցը: Այս պարապմունքի ընթացքում անհրաժեշտ ե գլխավորապես ուշադրությունը կենտրոնացնել այն տվյալների վրա, վորոնք ապացուցում են, թե ամեն կենդանի բան ծնունդ և առում անկենդան նյութից և վողջի ու մեռյալի մտապատկերները պայմանական են: Կյանքի զարգացման գիտական պատկերն ավետարանական պատմության հետ բաղդատելով, անհրաժեշտ ե նկատի ունենալ տերտիլական այն ճարպիկ խորամանկությունները, վորոնք ձգտում են ամեն տեսակ անհիմն պնդումների և խեղաթյուրումների ոգնությամբ համաձայնեցնել գիտական տվյալներն ավետարանի հետ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԴԵԿԱՎԱՐԻ ՀԱՄԱՐ

Գրեվ—«Мироведение безбожника», X գլ.

Զավածուկ—«О коробке консервов и о происхождении жизни на земле».

Новикова—«Как наука разрушает веру в душу», հրատ. «Безбожник»-ի,

ԽՄԲԱԿԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ
«Крестьянский антирелигиозный учебник», 4-րդ պարապմունք,

Զավածուկ—«Существует ли душа?», հրատարակ.

«Безбожник»-ի:

Сементовский—«История органического мира на земле».

Рожков—«Живая и мертвая материя».

Ярославский—«Библия для верующих и неверующих», մասն I, V և IV գլ.:

Малинин—«История мира», III—IX գլ.:

Заровнядный—«Беседы с деревенской молодежью» ||—V գլույցները:

Степанов—«О душе, об аде, рае и загробной жизни».


1003
13615

Տ-ՐԴ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

Կրոնը յեկ բժեկականությունը

Խչից և կախված մարդուս առողջությունը: Հիվանդությունը վորպես պատիժ մարդկանց մեղքերի հայտնաբերվող աստվածային պատուհաս: Հնարավոր և արդյոք մեղքերի թողության միջոցով հրաշագործ բուժումներ կատարել (ընկնավորություն, դիվահարություն, «կալուկապ», «աչքով տալ», «գել տալ»): Մասնագետ—սրբերը, հեքիմները և բժշկականությունը:

Հրաշագործ սրբապատկերները, սրբազն իրեն համբուրելը և հաղորդությունը վորպես վարակման աղբյուրներ: Մաքրակենցաղ սրբերի մարմի չփթելուն հավատք ընծայելը: Խ՞նչ և ասում գիտությունը հիվանդությունների յիրեան գալու և տարածվելու պատճառների մասին: Սոցիալական հիվանդությունները,



Նրանց պատճառները և գիտականորեն բուժելու հընարավորությունը: Մարդու կողմից հաղթահարված հիվանդությունները: Պայքար ծերացման դեմ: Յերիտասարդացումը: Հնարավնիր և արդյոք մեռելների հարությունը:

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ

Սույն թեմայի նպատակն է պարզաբանել, թե ինչպիսի վկասներ են տալիս կրոնը և կրոնական ծիսակատարություններն աշխատավորների առողջությանը: Պարապմունքի համար ինսամքով պետք է հավաքել տեղական նյութեր՝ կրոնական ծիսակատարությունների միջոցով յեղած վարակման դեպքերի մասին: Նույնպես պետք ե ընդգծել, վոր հեքիչների և տերտերների/թշգության մի քանի պրիոնները կարող են բացատրվել ներշնչումով և ինքնաներշնչումով:

ԴՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՄԱՐ

Страшн. „Борьба за здоровье-борьба с религией“
Путинцев. – „Происхождение религиозных праздников“ (о святых специалистах) Գլուխ Լ.

Новикова. – Как наука разрушает веру в душу.
Бриш. „Безбожник“-ի.

Завадовский. – „Существует ли душа“.

ԽՄԲՈՒԿԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

„Крестьянский антирелигиозный учебник“ 5-րդ
պարապմունք:

Дмитриева. – „Темнота и суеверия“.

Демченко. – „Кто вылечит—зناхар или доктор?“
Завадовский. – „Существует ли душа“ հրատ. „Безбожник“-ի 1927թ.:

Բ-ՐԴ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

Հարկավո՞ր ե արդյոք ասծու ոգնուրյունը գյուղացուն եւա սնէնուրյան մեջ

«Աստծու վողորմությունը» և հողի բնական հատկությունները: Հունձքն աստծուց կախում ունի արդյոք: Տերտերների սուս դատողությունները հողի մասին: (հողը ծնում ե այն, ինչ աստվածն ե հրամայում): Ի՞նչ ե ասում գիտությունը հողի մասին—հողի վորակը, կազմությունը, մշակման իհանակները և ֆամանակը, պարարտացումը, վոռոգումը և ցանքսափոխությունը: Գյուղանատեսության կոլեկտիվացումը: Տեինիկան գյուղատնտեսության մեջ—բանվարկան ույժը և շարժիչները, ձին, ելեկտրականությունը, տրակտորը: Գյուղի և քաղաքի միջև յեղած անդունդի վոչնչացումը գյուղատնտեսության մեքենայացման և ելեկտրիֆիկացիայի միջոցով:

Ինչից են առաջանում քամին, անձրես, կարկուտը և կայծակը, Յեղանակի գիտական նախագուշակուշակումը և Շտեր, զու լավ յեղանակ պարզես» աղոթքը: Յեղիքա մարդարեն և ելեկտրականությունը: Բարոմետր: Բնության վրա կատարվող գիտողությունները:

Հողի խոնավության քանակը կանոնավորող յեղանակները, Հողամշակման առանձին յեղանակները

կիրառելով՝ հունձքը չորությունից կամ ավելորդ խունավությունից պաշտպանելու միջոցներ, Անձրկի մեքենա: Անձրեի դեմ պայքարելու յեղանակներ, Կարկտահարության դեմ կիրառվող միջոցներ. շանթարգելու Պայքար կլիմայական ֆլաստակար պայմանների դեմ և այդ պայմաններին հարմարվելը:

Հացահատիկը վորպես աստվածային պարզեւ: Գիտխոսերը և ֆլաստառները վորպես ստանայի ծնունդ (ցորենը և վորոմը), Գիտականորեն հացահատիկը վոչ այլ ինչ եւ, յեթե վոչ մարդու ձեռքի աշխատանքի արդասիք:

Աղոթքը վորպես խոչնդուտ ֆլաստուների դեմ պայքարելու գործում:

Վայրի բույսերի բնական պայմանները, Բնական պայմանները և արհեստական ձեռնարկութները, Վորոնք վորոշում են բույսերի հատկությունը: Ժառանգականություն և բուծում: Տերտերական պրոպագանդան վորպես ագրո-ոգնության տարածման խոչնդուտ Տերտերական խորհուրդների ֆլաստակար դերը գյուղացիական տնտեսության մեջ: «Բույսերն աստծուսեղածործությունն են» /տերտերական տեսակետը և սերմերի ու բույսերի նոր տեսակներ առաջացնելու գործը (Միջուրինի և Բերբանկի փորձերը):

«Կենդանիներն աստծու արարածներ են» կրոնական տեսակետը:

Ընտանի կենդանիների ծագումը և տեսակների արհեստական ազնվացումը: Կենդանիների արհեստական առաջ բերման ու բարձրացման յեղանաւկի կիրառումը: Գյուղացիական սնապաշտություններն անասունների հիվանդությունների առաջաց-

ման մասին—կալ ու կապ, աչքով տալ, «թուղթ անել» ու հմայություն: Անասնաբուժությունը, աղոթքը և հեքիմությունը: Սրբերը վորպես կենդանիների հովանափորողներ: Կենդանիները վորպես մարդու բարեկամներ և թշնամիներ: Հունձքի բաժանումը հողագործի և նրա թշնամիների միջև (տերտեր, մորեխ, բուսաթիթեռ, մկներ և այլն): Աստծուն ակնկալելը խանգարում և անտեսության բարձրացման գործին:

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ

Նախորդ թեմաներում պարզաբանելով այն խընդիրը, թե աշխարհն առաջ ե յեկել առանց աստծու մասնակցության, թե աստված գոյություն ունի մարդկանց մտապատկերում միայն, այժմ մենք պետք ե անցնենք տապալելու այն նախապաշարումն, ըստ վորի իրը թե գյուղացիական անտեսությունն առանց աստծու ոգնության վարելն անհնարին ե:

Մենք պետք ե ցույց տանք, վոր վերջին ժամանակների բոլոր տնտեսական նվաճումներն ամեննեին կարուտ չեն յեկել յերկնային այդ անգութերի վորեմեն աջակցությանը, վոր հողամշակման, հողի պտղավետության բարձրացման, խոնավության պահպանման, հացահատիկների մշակության, դաշտաբուծության, բանջարաբուծության և անասնաբուծության բնագավառներում ձեռք բերված բոլոր անտեսական հաջողություններն ինքնին մարդկային նվաճումների արգասիք են հանդիսանում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՂԵԿԱՎԱՐԻ ՅԵՎ ԽՄԲԱԿԻ
ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

„Крестьянский антирелигиозный учебник“ 6-րդ
вещества иллюстраций.

Подяловский Н. „Божеские послания и дела рук
человеческих“ հրատ. „Долой неграмот-
ность“-ի 1925թ., 43հց.

” ” „Голодный год и пройдоха-поп“ հրատ.
„Долой неграмотность“-ի, 1925թ. 48հց.
Торев М.— „Молебень или трактор“, հրատարակու-
թյուն „Безбожник“-ի.

7-ՐԴ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

Ի՞նչպես յեվ ինչո՞ւ յէ առաջացել մարդկանց
մեջ հավաքը

Կրոնական մտապատկերների բացակայությունը՝
նախամարդու մոտ և գըա՞նախնադարյան արտադրու-
թյան պայմաններից բղխող պատճառները, Տեխնիկա-
յի աստիճանական զարգացումը, ժամանակակոր կանգ-
առումները, Վիրափորների և հիվանդների ինսամբը,
Մահվան հասկացողության զարգացումը, Մարմինը
կառավարող յերկորյակի (հոգու) իդեայի առաջա-
ցումը՝ աշխատանքի գործիքները կառավարող մարդու-
նմանողությամբ, Նախնադարյան անիմիզմի ամրա-
պնդումը՝ մահվան, յերազներին, ուշաթափություն-
ներին և հիվանդություններին ոխալ բացարություն-
տալու հետևանքով։ Հոգու արտաքին տեսքը և նրա-

բնակավայրը մարմնում։ Քասակարգային հասարա-
կության առաջացումը։ Հոգու իդեայի ոգտագործումը
դասակարգային կովում՝ տիրող դասակարգերի կող-
մից։ Քուրմերը վորպես շահագործող դասակարգի ըս-
պաւարկուներ։ Հանդերձյալ կյանքի մտապատկներ-
ների զարգացում՝ ըստ թաղման ձևերի։ Դժոխքի և զը-
րախտի ուսմունքը վորպես ավելի ուշ ժամանակների
յերեսութեան հասարակության դասակարգային բաժան-
վածության անդրադարձումն այսուեզ։ Քրիստոնեա-
կան տեսությունները հոգու մասին։ Նախնիքների
պաշտամունքը։ Տոտեմիզմ, Տոտեմիզմի մնացորդները
քրիստոնեյության մեջ (սուրբ հոգին աղավնու կեր-
պարանքով, ավետարանիչները կենդանիների կերպա-
րանքով, Հիսուս-գառնուկ), Նախնիքների պաշտա-
մունքի մնացորդները ժամանակակից գյուղում (տան
վոգի, շղովլաթօ)։ Հողագործ ժողովուրդները և նրանց
կրոնները, ԽՍՀՄ ժողովուրդների մեջ պահպանված
ներկա հեթանոսական կրոնները, Բնության ուժերին՝
հողին, արեգակին, կենդանիներին և բուսական աշ-
խարհի ներկայացուցիչներին յերկրագագիլը։ Կրոնա-
կան որացույցը գյուղացու տնտեսության և կենցաղի
մեջ։ Յերկնային և յերկրային միապետությունները։
Կապիտալի միահեծան իշխանությունը և աստվածա-
յին ամհնակարողությունը։

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ

Ներկա պարապմունքի ընթացքում հարկավոր ե
վորոշակի պարզաբանել, վոր կրոնը մարդու ընածին
հատկությունը չե, վոր սկզբնական ժամանակներում

Նախամարդիկ բոլորովին կրոն չեն ել ուսեցել Մենք պետք ե ընդգծենք, վոր կրոնը մեքենաբար մեկի զըլ-խից մյուսի զլուխը փոխազրվող մի բան չե, վոր նա սերտորեն շաղկապված ե մարդկանց արտադրական հարաբերությունների ու նրանց պայմանների հետ Կարճ ասած, մենք պետք ե բաց անենք կրոնի սոցիալական արմատները: Մենք պետք ե մատնանշենք այն նյութական պատճառները, վորոնք ծնունդ են տվել աստծու մասին յեղած առաջին մտապատկերներին նախամարդու գիտակցության մեջ: Այսուհետև թեթե-վակի կերպով պետք ե խորանանք նախամարդու գո-յության պատմության մեջ և ցույց տանք, թե ինչ-պես, հասարակական պայմանների և մարդկային գո-յության հասարակական ձևերի փոփոխության զուգըն-թաց փոխվել են նաև նրանց մտածողության ձևերը և շրջապատի աշխարհի մասին ուսեցած հայցքները: Անհրաժեշտ ե ավելի մանրամասնորեն կանգ առնել այն հարցի վրա, թե դասակարգային հասարակության առաջացման հետ միասին՝ ինչպիսի դեր սկսեց խա-դալ հոգու և հանդերձյալ կյանքի իդեան դասակար-գային պայքարում: Անհրաժեշտ ե բաց անել շահա-գործող դասակարգին սպասարկող քուրմերի գերը: Հատուկ ուշադրություն պետք ե դարձնել նախնա-դարյան հավատալիքների ու քրիստոնեության բաղ-դատության և կրոնի անհետացած ձևերից ժամանա-կակից սովորությունների ու ծիսակատարությունների մեջ պահպանված մնացորդների վրա:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԴԵԿԱՎԱՐԻ ՀԱՄԱՐ

Степанов.—„Очерк развития религиозных веро-ваний“ (ամբողջ գիրք):

Путинцев.—„Происхождение религиозных праздников“.

Кунов Г.—„Возникновение религии и веры в бого“, Գլուխ 1—5:

ԽՄԲՈԿԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

„Крестьянский антирелигиозный учебник“ 7-րդ պարագաները:

Ярославский.—„Как рождаются, живут и умирают бо-ги“, Գլուխ 1—5:

” ” „Религия и РКП“ եջ 12—16:

Заровнядный.—„Беседы с деревенской моло-дежью“ 6-րդ գրույցը:

Ց-ՐԴ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

Քրիստոնեյությունը յեվ վոչ քրիստոնեյական կրօնները

Քրիստոնեյությունն ու նրա գերը ժամանակա-կից հասարակության մեջ: Քրիստոնեյությունը վոր-պես կապիտալիստական պետությունների մեջ տիրա-պետող կրոն: Քրիստոնեյության դասակարգային ըը-նույթը և նրա ուսմունքը մերձավորին սիրելու, համ-ցերատարության, հեղության և այլ խնդիրների մա-սին: Աշխատավորական հարցն ըստ ավետարանի և

կիրառելով՝ հունձքը չորությունից կամ ավելորդ խռո-
նավությունից պաշտպանելու միջոցներ։ Անձրիի մե-
քենա։ Անձրեսի դեմ՝ պայքարելու յեղանակներ։ Կարկ-
տահարության դեմ՝ կիրառվող միջոցներ։ շանթարգելու
Պայքար կլիմայական վնասակար պայմանների դեմ և
այդ պայմաններին հարմարվելու։

Հացահատիկը վորպես աստվածային պարզեւ։ Գիտ-
խոտերը և վնասատուները վորպես սատանայի ծնունդ
(ցորենը և վորոմը), Գիտականորեն հացահատիկը վոչ-
այլ ինչ և, յեթե վոչ մարդու ձեռքի աշխատանքի ար-
գասիք։

Ազոթքը վորպես խոչնորու վնասատուների դեմ
պայքարելու գործում։

Վայրի բույսերի բնական պայմանները, բնական
պայմանները և արհեստական ձեռնարկումները, վո-
րոնք վորոշում են բույսերի հատկությունը։ Ժառան-
գականություն և բուծում։ Տերտերական պրոպագան-
դան վորպես ագրո-ոգնության տարածման խոչնորու-
թերտերական խորհուրդների վնասակար դերը դյու-
դացիական տնտեսության մեջ։ «Բույսերն աստծո-
ստեղծագործությունն են» տերտերական տեսակետը
և սերմերի ու բույսերի նոր տեսակներ առաջացնելու
գործը (Միջուրինի և Բերբանկի փորձերը)։

«Կենդանիներն աստծու արարածներ են» կրոնա-
կան տեսակետը։

Բնտանի կենդանիների ծագումը և տեսակների
արհեստական աղնվացումը։ Կենդանիների արհես-
տական առաջ բերման ու բազմացման յեղանա-
կի կիրառումը։ Գյուղացիական սնապաշտություն-
ներն անասունների հիվանդությունների առաջաց-

ման մասին—կալ ու կապ, աչքով տալ, «թուղթ ա-
նել» ու հմայություն։ Անասնաբուժությունը, աղոթքը
և հեքիմությունը։ Սրբերը վորպես կենդանիների հո-
վանավորողներ։ Կենդանիները վորպես մարդու բարե-
կամներ և թշնամիներ։ Հունձքի բաժնումը հողագոր-
ծի և նրա թշնամիների միջև (տերտեր, մորեխ, բու-
սաթիթեռ, մկներ և այլն)։ Աստծուն ակնկալելը
խանգարում և տնտեսության բարձրացման գործին։

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ

Նախորդ թեմաներում պարզաբանելով այն խըն-
դիրը, թե աշխարհս առաջ ե յեկել առանց աստծու մաս-
նակցության, թե աստված գյություն ունի մարդ-
կանց մտապատկերում միայն, այժմ մենք պետք ե
անցնենք տապալելու այն նախապաշարումն, ըստ վո-
րի իր՝ թե գյուղացիական տնտեսությունն առանց
աստծու ոգնության վարելն անհնարին ե։

Ենք պետք ե ցույց տանք, վոր վերջին ժամա-
նակների բոլոր տնտեսական նվաճումներն ամենևին
կարու չեն յեղել յերկնային այդ անգոր ուժերի վորե-
մե աշխակցությանը, վոր հողամշակման, հողի պտղա-
վետության բարձրացման, խոնավության պահպան-
ման, հացահատիկների մշակության, դաշտաբուծու-
թյան, բանջարաբուծության և անասնաբուծության
բնագավառներում ձեռք բերված բոլոր տնտեսական
հաջողություններն ինքնին մարդկային նվաճումների
արգասիք են հանդիսանում։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՂԵԿԱՎԱՐԻ ՅԵՎ ԽՄԲԱԿԻ
ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

„Крестьянский антирелигиозный учебник“ Յ. Ռ.
պարտպենքը.

Подяловский Н. „Божеские послания и дела рук
человеческих“ հրատ. „Долой неграмот-
ность“-ի 1925թ., 43 էջ:

„ “ „ „Голодный год и пройдоха-поп“ հրատ.
„Долой неграмотность“-ի, 1925թ. 48 էջ:

Торев М.— „Молебень или трактор“, հրատարակու-
թյուն „Безбожник“-ի:

7-ՐԴ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

Ի՞նչպես յեվ ինչո՞ւ յե առաջացել մարդկանց
մեջ նավասիր

Կրոնական մտապատկերների բացակայությունը
նախամարդու մոտ և գրանախնագարյան արտադրու-
թյան պայմաններից բղխող պատճառները, Տեխնիկա-
յի աստիճանական զարգացումը, ժամանակավոր կանգ
առումները, Վիրավորների և հիվանդների խնամքը,
Մահվան հասկացողության զարգացումը, Մարմինը
կառավարող յերկրորյակի (հոգու) իդեայի առաջա-
ցումը՝ աշխատանքի գործիքները կառավարող մարդու-
նմանողությամբ, Նախնադարյան անիմիզմի ամբո-
վնդումը՝ մահվան, յերազներին, ուշաթափություն-
ներին և հիվանդություններին ոխալ բացատրություն-
տալու հետևանքով։ Հոգու արտաքին տեսքը և նրա-

բնակավայրը մարմնում։ Դասակարգային հասարա-
կության առաջացումը։ Հոգու իդեայի ոգտագործումը
դասակարգային կովում՝ տիրող դասակարգերի կող-
մից։ Քուրմերը վորպես շահագործող դասակարգի ըս-
պասարկուներ։ Հանդերձյալ կյանքի մտապատկերնե-
րի զարգացումն՝ ըստ թագման ձեերի։ Դժունքի և զը-
րախափ ուսմանքը վորպես ավելի ուշ ժամանակների
յերեւությ և հասարակության դասակարգային բաժան-
վածության անդրադառնումն այստեղ։ Քրիստոնեա-
կան տեսությունները հոգու մասին։ Նախնիքների
պաշտամունքը։ Տոտեմիզմ, Տոտեմիզմի մնացորդները
քրիստոնեյության մեջ (սուրբ հոգին աղավնու կեր-
պարանքով, ավեաարանիչները կենդանիների կերպա-
րանքով, Հիսուս-գառնուկ), Նախնիքների պաշտա-
մունքի մնացորդները ժամանակակից գյուղում (ուն
վոգի, «ղողլաթ»)։ Հողագործ գողովուրդները և նրանց
կրոնները, ԽՍՀՄ ժողովուրդների մեջ պահպանված
ներկա հեթանոսական կրոնները, Բնության ուժերին՝
հողին, արեգակին, կենդանիներին և բուսական աշ-
խարհի ներկայացուցիչներին յերկրպագելը։ Կրոնա-
կան որացույցը գյուղացու տնտեսության և կենցաղի
մեջ։ Յերկնային և յերկրային միապետությունները։
Կապիտալի միահեծան իշխանությունը և աստվածա-
յին ամենակարողությունը։

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ

Ներկա պարապմունքի ընթացքում հարկավոր ե
գորոշակի պարզաբանել, զոր կրոնը մարդուս բնածին
հատկությունը չի, զոր սկզբնական ժամանակներում

Նախամարդիկ բոլորովին կրոն չեն ել ունեցել: Մենք պետք ե ընդգծենք, վոր կրոնը մեքենաբար մեկի գըլից մյուսի գլուխը փոխադրվող մի բան չե, վոր նա սերտորեն շաղկապված ե մարդկանց արտադրական հարաբերությունների ու նրանց պայմանների հետ: Կարճ ասած, մենք պետք ե բաց անենք կրոնի սոցիալական արմատները: Մենք պետք ե մատնանշենք այն նյութական պատճառները, վորոնք ծնունդ են տվել աստծու մասին յեղած առաջին մտապատկերներին նախամարդու գիտակցության մեջ: Այնուհետև թեթեվակի կերպով պետք ե խորանանք նախամարդու գոյության պատճության մեջ և ցույց տանք, թե ինչպես, հասարակական պայմանների և մարդկային գոյության հասարակական ձևերի փոփոխության զուգընթաց փոխվել են նաև նրանց մտածողության ձևերը և շրջապատի աշխարհի մասին ունեցած հայցքները: Ընհրաժեշտ ե ավելի մանրամասնորեն կանգ առնել այն հարցի վրա, թե դասակարգային հասարակության առաջացման հետ միասին՝ ինչպիսի դիր սկսեց խաղալ հոգու և հանդերձյալ կյանքի իդեան դասակարգային պայքարում: Անհրաժեշտ ե բաց անել շահագործող դասակարգին սպասարկող քուրմերի դերը: Հատուկ ուշադրություն պետք է դարձնել նախադարյան հավատալիքների ու քրիստոնեության բաղդատության և կրոնի անհետացած ձևերից ժամանակակից սովորությունների ու ծիսակատարությունների մեջ պահպանված մնացրդների վրա:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԴԵԿԱՎԱՐԻ ՀԱՄԱՐ

Степанов.—„Очерк развития религиозных верований“ (ամբողջ գիրքը):

Путинцев.—„Происхождение религиозных праздников“.

Кунов Г.—„Возникновение религии и веры в бога“, Գլուխ 1—5:

ԽՄԲԱԿԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

„Крестьянский антирелигиозный учебник“ 7-րդ պարագամունքը:

Ярославский.—„Как рождаются, живут и умирают боги“, Գլուխ 1—5:

„ „ „Религия и РКП“ Կջ 12—16:

Эзаровнядный.—„Беседы с деревенской молодежью“ 6-րդ գլուխը:

Ց-ՐԴ ՊԱՐԱՊԱՏՈՒՆՔ

Քրիստոնեյությունը յեվ վոչ քրիստոնեյական կրօնները

Քրիստոնեյությունն ու նրա գերը ժամանակակից հասարակության մեջ: Քրիստոնեյությունը վորպես կապիտալիստական պետությունների մեջ տիրապետող կրոն: Քրիստոնեյության դասակարգային բընույթը և նրա ուսմունքը մերձավորին սիրելու, համբերատարության, հեղության և այլ-խնդիրների մասին: Աշխատավորական հարցն ըստ ավետարանի և

ժամանակակից դասակարգային պայքարը։ Ի՞նչ դեր ե խաղում յեկեղեցին ճնշված դասակարգերին շահագործողների դեմ լայքարելուց յետ կացնելու գործում։ Յեկեղեցու քաղաքական, տնտեսական, կրթական և այլ տիպի կազմակերպությունները։ Իշխանության գլուխ կանգնած քրիստոնյական կուսակցությունները և նրանց քաղաքականությունը։ Քրիստոնյությունը և Փաշիզմը։ Քրիստոնյական յեկեղեցու թշնամական վերաբերմունքը ԽՍՀՄ հանդեպ։

Վոչ-քրիստոնյական կրոնները և նրանց շահագործողական հյությունը։ Մահմեղականությունը, նրա որենքները և այդ որենքների նշանակությունը։ Մասնավոր սեփականության, շահագործող դասակարգերի տիրապետության և հին կանոնների սրբագործումը։ Համբաւալամությունն ու նրա հականեղափոխական նշանակությունը։ Մահմեղականությունը վորպես հականեղափոխության գործիք թուրքիայում և Արևելքուայլ յերկրներում։ Մահմեղականությունը ԽՍՀ Միության մեջ վորպես գենք թաթարական, թուրքմենական և այլ ազգությունների նացիոնալիստական բուժուագիտական ձեռքին՝ Խորհրդային իշխանության և նըրբա ազգային ու տնտեսական քաղաքականության դեմ։

Բուդդայական կրոնը։ Նրա շահագործողական եյությունը։ Բուդդայական կրոնի ոգտագործումն անդլացիների կողմից Հնդկաստանում։

Յերայական կրոնը վորպես հրեյտա աշխատավորությանը բուրժուազիային յենթարկելու միջոց։ Յերսայական կրոնի պատվիրանների և պատգամների շահագործողական նշանակությունը։ Յերայական, քրիստոնյական, մահմեղական և այլ կրոնների սերտ կա-

պը հեղափոխական շարժման դեմ պայքարելու գործում։ Կրոնը վորպես գաղութային բռնագրավման գործիք, Թաղութիւններ հետամտելն իմպերիալիստների կողմէց, կրոնի ակտիվ դերը գաղութիւններ նվաճելու գործում։ Միսիոնարների գործունեությունը Զինաստանում։ Ամեն տեսակ կրոնների աշակցությունը գաղութիւնների թալանման գործին։ Ազգային յերկարակության հրահրումը վորպիս միջոց թուլացնելու բոլոր ազգությունների աշխատավորների դաշինքը՝ կապիտալիստների դեմ նրանց մզած պայքարում։ Կրոնը և ազգային յերկարակությունը, կրոնի դերն Անդրկովկասի ազգային յերկպառակությունների և ընդհարումների մլ.ջ. 900-ական թվականներից մինչև խորհրդայնացումը։ Կրոնը վորպես զենք իմպերիալիստների ձեռքին ԽՍՀ Միության դեմ։ Լուսավորչական յեկեղեցու և դաշնակցության դեկափար դերը հայ-թուրքական ընդհարումների ժամանակի նրանց սերտ դաշինքը Խորհրդային Հայաստանի դեմ պայքարելու գործում։

Անաստվածական շարժումը կապիտալիստական յերկրներում։ Պրոլետարական անաստվածներն արտասահմանում։ Պրոլետարական աղատամիտների ինտերնացիոնալը։ Անաստվածների պայքարը բոլոր տեսակի կրոնների դեմ։

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ

Ներկա թեմայի նպատակն ե ցույց տալ վորլոր տեսակի կրոնները բուրժուազիայի տիրապետության ամենահզոր զենքն են հանդիսանում։ Անհրա-

Ժեշտ ե մատնանշել այն հանգամանքը, թե ինչպես բոլոր տեսակի կրոններն ել ոգտագործվում են կապիտալիստների գաղութային քաղաքականության մեջ և քանդորական շարժման ու ԽՍՀ Միության դեմ պայքար մղելու գործում: Լավ կլինի սույն թեման մշակել փաստական նյութերի հիման վրա, ոգտագործելով նաև լրագրական հաղորդագրությունները:

Պարապմունքի ընթացքում վերլուծության և յենթարկվում քրիստոնեական, մահմեղական, յերայական և այլ կրոնների գերը: Անհրաժեշտ ե մատնանշել, վոր կրոնների տարրեր արտաքինի տակ թագությած և մեկ ընդհանուր եյություն, դա այն ե, վոր նրանք բոլորն ել սպասարկում են տիրող դասակարգերին: Ներկա թեմայով ունկնդիրները պետք ե հանգեն այսպիսի մի յեղրակացության—բոլոր տեսակի կրոններն ել իրենց կատարած դերով միևնույնն են, լավ և լատ կրոններ չկան: Այդ պատճառով ել անտառվածները պայքարում են բոլոր տեսակի կրոնների գեմ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՄԱՐ

Шейнман.—„Бог и капитал“, հրատ. „Прибой“-ի I, II, V, և VI գլուխները:

ԽՄԲԱԿԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

„Крестьянский антирелигиозный учебник“
Յ-րդ պարապմունք:

„Антирелигиозник“, հանդեսը, № 2 1926 թ. „Церковь и международное рабочее движение“ հոդված:

Էլիաшевич.—„Религия на службе капитала“
հրատ. „Прибой“-ի 1926 թ.:

Յ-րդ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

Յեղել ե արդյոք քրիստու յեվ ի՞նչպէս ե յերեվան յեկել քրիստոնեությունը

Քրիստոսի մասին ավետարանում բերված վկայությունների հակասական բնույթը: Քրիստոսի կյանքին վերաբերվող ավետարանական պատմվածքների պատմական և աշխարհագրական սխալները: Քրիստոսին վերաբերվող վկայությունների բացակայությունը | դարի աշխարհիկ գրողների գործերում: Քրիստոսի մասունքների (պատմուճանի, մեխի, խաչի բեկորի, գեղարդի և այլն) բազմաթիվ պատմական կեղծիքները: Քրիստոսի մասին արված մարգարեյությունների ստությունը: «Քրիստոս» բառի նշանակությունը: Աստծու վորդու և տառապող աստծու գաղափարը վորպիս փոխառություն հեթանոսական պատմություններից: Հեթանոսական աստվածությունները: Խաչի յերկըպագության ծագումը: Հաղորդության խորհրդագի ծագումը: Հեթանոսական աստվածների ծննդյան, մահվան և հարության տաները: Նախաքրիստոնեական «հայրմեր»-ը: Հին յերայական ավանդները քրիստոնեյության նախորդներն են: Հրեյա ժողովրդի կործանումը Հոռմի միջոցով՝ վորպես աստծու վորդու գալստյան առասպելին ծնունդ տվող պայման: Հոռմեյական կայսրության ստրկական տընտեսության քայլքայումը: Հոռմեյական հասարակության բոլոր խավերին համակող անկման տրամադրությունները (մոլորվածություն, փրկիչ աստվածների վորոնում, դյուրահավատություն, հրաշքի ծարավ)։

Այս հոդի վրա տառապող աստծու, աշխարհի փրկչի առասպելի յերեան գալը։ Նախական քրիստոնեյական համայնքներ։ Մեզ ժամանակակից աղանդավորական պատմվածքների չափազանցություններն այդհամայնքների կոմոնիստական կազմի մասին։

Քրիստոնեյության պետական կրոն գառնալը և մոտ 2000 տարի շահագործողներին սպասարկելը։
Քրիստոնեյության մուտքը Հայաստան։

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ

Սույն թեմայի նպատակն ե ցույց տալ, վոր քըրիստոսը, վորովես պատմական անձնավորությունն, գոյություն չի ունեցել, վոր նրա մասին գոյություն ունեցող պատմությունները, հյուսվել են հեթանոսական դիցարանությունների որինակով և լայն տարածումն են գտել հոռմեյական կայսրության ընդհանուր անկանոն շնորհիվ։ Հարկավոր ե առանձին մանրամասնությամբ կանգ առնել քրիստոսի մասունքների կեղծիքի վրա, ցույց տալու համար, թե ինչպիսի զգուշությամբ պեաք ե վարվել քրիստոսի վերաբերյալ «պատմական» վկայությունների հետ։ Առանձին ուշադրություն պետք ե նվիրել նաև քրիստոսի մասին գոյությունունեցող մարգարեյությունների քննադատությանը, քանի վոր հավատացյաների մեջ այդ մարգարեյությունները մեծ ժողովրդականություն են վայելում։ Հոռմի եկոնոմիկան, և իդեոլոգիան պետք ե շոշափել ընդհանուր գծերով միայն։ Իսկ ավետարանական պատմության համար որինակ հանդիսացող հեթանոսական պատմվածքների վրա հարկավոր ե ավելի մանրամասն

կանգ առնել, ըստ ամենայնի ակնառու։ Կերպով ցույց տալու համար, թե ինչպիս առանց պատմական քրիստոսի յիշ կարող եր հյուսվել ավետարանական պատմությունը, քրիստոնեյական իդեոլոգիայի այդ կորիզը։ Ի վերջո, վորպես հակակըլու առաջին քրիստոնյաների կոմոնիզմին վերաբերյալ աղանդավորական պատմըվածքների, պետք ե ընդգծել այս չափազանցությունների հետադիմական բնույթը և առաջին քրիստոնեյական համայնքներին կոմոնիզմ վերագրելու պնդումների անհիմությունը։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՂԵԿԱՎՈՐԻ ՀԱՄԱՐ

„Происхождение христианства, его социальные корни“, „Жил ли христос“ տես „Антирелигиозник“ ժուրնալի 1926 թ. № 12-ում գետեղված կոնսպեկտը։

„Происхождение христианского культа“—տես „Антирелигиозник“ ժուրնալի 1927 թ. № 1-ում գետեղված կոնսպեկտը։

ԽՄԲԱԿԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

„Крестьянский антирелигиозный учебник“, 9-րդ պարագաները։

Ярославский. — „Как рождаются, живут и умирают боги“, Գլուխ 7—8։

А. Логинов. — „Легенда о христе. Урсынович С. „Рождество“, տես „Безбожник“ 1926 թ. № 50։
Лобачев. — „Правда о христе и христианстве“.

10-ՐԴ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

Ովեր Են աղանդավորները

Իսչնւ յեր ցարական կառավարությունը հետապընդում և զանդավորներին: Ո՞ւմ ոգտին ին աշխատում աղանդավորները ներկայումս: Աղանդավորական վերնախավի սոցիալական կազմը: Կուլակները վորպետ աղանդավորական շարժման գլխավոր ղեկավարներ: Միջակ ու չքավոր գյուղացիությունը վորպետ աղանդավորների կողմից ղեկավարվող մասսա: Ուղղափառ յեկեղեցու հեղինակության անկումը, հակալրոնական և քաղ-կրթական աշխատանքը մասսաների ակտիվության աճման չափով ծավալելու անկարելիությունը, կուլակների դիրքի մասնակի ամրացումը և գյուղի կոոպերացման անրավարարությունը վորպետ աղանդավորության աճմանը նպաստող պայմաններ: Թշնամիներին չընդդիմադրելու մասին աղանդավորների կողմից կարդացվող քարոզների ֆլաստարությունը: Աղանդավորների թափառումները քաղաքացիական կոիվների ժամանակ: Աղանդավորական առանձին առաջնորդների և աղանդավորական խմբակցությունների հականեղափոխական գործունեյության որինակներ: Աղանդավորությունը և յերկրի պաշտպանության գործը: Թշնամիներին չընդդիմադրելու աղանդավորական ուսմունքը վորպետ նեղափոխության նըլվաճումների դավաճանումն: Ո՞ւմն և ձեռնտու այդ ուսմունքը ներկայումս: Զինվորական ծառայությունից և հարկատավությունից հրաժարվելը: Բոյկոտը Խորհրդային դպրոցի դեմ: Խորհրդային տնտեսական և կոոպե-

րատիվ կազմակերպություններին իրենց սեփական տնտեսական և կոոպերատիվ միությունները հակագրելու ցանկություն: Աղանդավորական առաքինությունների՝ «Ժուժկալության», «Կուլտուրականության», «Սակավապետության» և «աշխատասիրության» հետադիմական նշանակությունը: Աղանդավորների կապն արտասահմանյան բուժուազիայի հետ: Գեղծ-սոցիալստական լրգունգներով մասսաներին խարելու աղանդավորական փորձերը: Ի՞նչպես պայքարել աղանդավորության դեմ: Աղանդավորությունը շերտավորման յենթարկելու աշխատանքը: Հակակրօնական պրոպագանդա աղանդավորների մեջ:

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ

Այս պարապմունքի նպատակն է՝ ծանոթանալ ժամանակից աղանդավորական շարժման բնույթի և պատճառների հետ և բացահայտել աղանդավորական «Կոմունիզմի» ու աղանդավորական պրոպագանդայի հետադիմական դերը: Առանձնապես պետք է ընդգծել, վոր աղանդավորական շարժման մասնակարությունը Խորհրդային և կուսակցական կազմակերպություններին իրենց սեփական միությունները հակադրելու մեջ և: Պրոլետարական ղեկավարությունից զուրս հանգած ալև միությունները հանդիսանում են հակախորհրդային քաղաքական հոսանքների գործիք: Աղանդավորների կտրվածությունը ջլատում և մեր աշխատավորության քաղաքական միասնականությունը: Պետք է պարզաբանել, վոր աղանդավորությունը համարելու առանձին սոցիալական միանգների գործիք: Աղանդավորների կտրվածությունը ջլատում և մեր աշխատավորության քաղաքական միասնականությունը: Պետք է պարզաբանել, վոր աղանդավորությունը համարելու առանձին սոցիալական մի խմբավորություն չե, ուստի

և սիալ և նրան միանգամայն հականեղափոխականների հետ նույնացնել, կամ թե չեն հեղափոխական գույներով պահել:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԴԵԿԱՎԱՐԻ ՀԱՄԱՐ

Лукачевский— „Сектантство прежде и теперь“.

Путинцев— „Современное сектантство“, տես „Антирелигиозник“-ի 1926 թ. № 4 և 6-ում զետեղված հոդվածները:

— „Движущие силы сектантства“, տես

„Безбожник“ № 26.

— „Сектантство и антирелигиозная пропаганда“ բրոյալը:

„Тезисы антирелигиозного совещания“, տես „Антирелигиозник“ № 8, 1926 թ.:

ԽՄԲԱԿԻ ԱՆԴԱՄԵՐԻ ՀԱՄԱՐ

„Крестьянский антирелигиозный учебник“, 10-րդ պարագաները:

Ярославский— „Религия и РКП“, եջ 35—37,

Путинцев— „Сектантские вожди и их роль в русских революциях“, տես „Безбожник“, 1926 թ. № 44 և 45-ում զետեղված հոդվածները:

„Безбожник“ ժողովնալի 1926 թ. № 19—20.

11-ՐԴ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

Գյուղի սոցիալիստական օբնարարությունը և յեղ կրոնը

Գյուղի գասակարգային հակասությունները և կրոնական կազմակերպությունների դերը դասակարգային կովում:

Պրոլետարական դիկտատուրայի որոք իրմանց գոյությունը պահպանած բուրժուական տարրերի գործունեյության մասնակի և ժամանակավոր աշխուժացումը: Նրանց թշնամական վերաբերմունքը դեպի սոցիալիզմի կառուցումը:

Ցեկեղեցու դերը վորպես բուրժուական շահագործող տարրերի տրամադրությունների իդեյական արտահայտչի:

Ցեկեղեցին վորպես սոցիալիստական շինարարության գործում Խորհրդային իշխանության վրա հակազդող կազմակերպչական կենտրոն:

Խորհրդային իշխանության ազգային քաղաքականությունը վորպես սոցիալիստական շինարարությունն ապահովող պայման: Կրոնը վորպես ազգային ատելություն հրահրելու, զանազան ազգերի աշխատավորների մեջ յերկառակության սերմեր ցանելու և այդպիսով սոցիալիստական շինարարությունը թուլացնելու գործիք:

Կուլակների և նեպմանական բուրժուազիայի դերը գյուղում: Աղանդավորական քարոզիչների գործունեյությունը՝ Խորհրդային իշխանության սոցիա-

լիստական ձեռնարկումները գյուղում քանդելու ուղղությամբ:

Յեկեղեցական կազմակերպության և աղանդավորական վերնախավի կապը համաշխարհային բուրժուազիայի հետ Կապիտալիստական ոեթիմի մնացորդները պահպանելու նպատակով այդ խավերի կողմից մղվող պայքարը պրոլետարական դիկտատուրայի ժամանակ, Յեկեղեցական—տերտերական և աղանդավորական շարժման աշխուժացման պատճառներն ու պայմանները գյուղում: Մեքենայացումն ու ինդուստրացումը վորպես գյուղական միջավայրի կրոնական տրամադրությունները տարրայուծելու նախադրյալ՝ կոռպերացիան վորպես սոցիալիզմի ուղի, և տերտերական զոգումը նեպմանների հետ կոռպերացիայի դեմ պայքարելու համար: Գյուղական տնտեսությունը բարձրացնելու և գյուղացու նյութական դրությունը բարվոքելու ուղղությամբ՝ Խորհրդային իշխանության սոցիալիստական ձեռնարկումները:

Աստծու վողորմությանն ապավինելու տերտերական ագիտացիան Խորհրդային բժշկությունը և տերտերական կախարդությունը: Խորհրդային պարոցը և տերտերները: Պրոլետարական տնտեսման ոեթիմը և կրօնի վրա կատարվող ծախսերը: Անտառվածությունը վորպես սոցիալիզմի կառուցման ուղին հարթող գործիք:

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑԱԿՆԵՐ

Այս պարապմունքի նպատակն է պարզաբնելք վոր կրօնը, վորի գոյությունը բուրժուական համա-

քակության մեջ հարկավոր եր շահագործման նկատառութմներով, մեզ մոտ, ԽՍՀ Միության մեջ, սոցիալիզմի կառուցման վիթխարի մի արգելակ և հանդիսանում: Այս թեմայի համար առանձին բրոցյուրներով գրականություն չկա: Իսկ հողվածային նյութ բավական քանակությամբ կարելի յե գտնել «Եզբօյնիք» թերթում և «Անտիրելիգիօնիք» հանդեսում: Ժամանակակից կրոնական կազմակերպությունների հետազիմական եյությունը պարզաբնելուց բացի, անհրաժեշտ և նաև մատնանշել, վոր աշխատավորների կրոնամոլությունն ինքնըստինքյան, հակառակ նրանց իսկ կամքին, սոցիալիզմ կառուցելու արգելակ և հանդիմանում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԴԵԿԱՎԱՐԻ ՀԱՄԱՐ

Путинцев.— „Гражданская война, нэп и религия“ № 4, “Антирелигиозник”, № 11, 1926 թ.:

ԽՄԲԱԿԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

„Крестьянский антирелигиозный учебник“, 11-րդ պարագամունք

Лукачевский.—“Борьба за середняка и антирелигиозная пропаганда“, № 4, “Безбожник”, № 28, 1926 թ.:

Сарабьянов.— „Социалистическое строительство и религия“, № 4, “Безбожник”, № 28, 1926 թ.:

12-ՐԴ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

Կրոնը յեվ գյուղական կենցաղը

Կրոնը վորպիս գյուղացիական կենցաղի միջով ժորտային հարաբերություններն ամրապնդելու միջոց:

Կրոնը կենցաղում վորպիս նոր կյանք կառուցելու արգելակ: Հնի նվիրականությունը: Յերկյուղած վերաբերմունք հանդեպ հինն ու ավանդականը:

Հայրերի և զավակների դրությունը գյուղացու ընտանիքում, ստրկական բարյացակամություն հանդեպ, ալվագը, իրավագրկություն և ընկճվածություն:

Մարդու և կնոջ դրությունը գյուղացու ընտանիքում — կինը վորպիս ստրուկ, ծեծի որինականությունը, ամուսնական տերրոր, կնոջ տաժանակիր ու ընկճված վիճակը, ծանրաբեռնվածությունը:

Տղամարդու և կնոջ դրությունը գյուղական հասարակության մեջ նախքան հեղափոխությունը — կինը վորպիս ստորին կարգի արարած՝ տղամարդու համեմատությամբ, ամբարտավան և արհամարհական վերաբերմունք «կնկա» հանդեպ և վերջնիս իրավագըրշկությունը գյուղական հասարակության մեջ հին ռեժիմի ժամանակ:

Կրոնի դերը գյուղական կենցաղում վորպիս տնտեսության հետամնաց ձևերի ու յեղանակների ամրացման միջոց: Կրոնահողագործական ուսացուցչը հավատալիքները և հմայությունները գյուղատնտեսության բնագավառում և նըանց վասակար ազդեցությունը:

Յեկեղեցական կանոնները գյուղական կենցաղում և նրանց վասակար ու հետադիմական դերը: Յեկեղեցական տոնները վորպիս կրոնական հաշվի առավելագույն ծավալման միջոցներ: Յեկեղեցական տոնների կործանարար ու կորստարեր բնույթը և խափանիչ դերը գյուղատնտեսության զարգացման գործում: Տոնները վորպիս վորկրամոլության, հարբեցողության, խուլիգանության, տուր ու դժվոցի ու սպանության որեր և նրանց բթացուցիչ նշանակությունը:

Հեղափոխական տոնները վորպիս կրօնական հաշվից գյուղն ազատագրելու միջոց, վորպիս նոր կյանքի կառուցման մեջ ակտիվ մասնակցություն ունենալու հնարավորությունը պայմանավորող տրամադրություններն ամրապնդելու միջոց:

Նոր կենցաղը վորպիս անաստվածության գործուն: Նոր կենցաղի իդեաները քարոզելով պայքար մղել կենցաղային հետամնաց ձևերի դեմ: Նոր կենցաղի կենսագործումը վորպիս միջոց ազատագրելու գյուղացու գիտակցությունը բոլոր տեսակի նախապաշարումներից և ֆանտաստիքական մտապատկերներից՝ տնտեսության և ընտանեկան ու հասարակական կենցաղավարության հարցերում:

Կրոնը վորպիս կենցաղի հին ձևերն ամրապնդող միջոց, անսատվածությունը վորպիս գյուղացու ընտանեկան և հասարակական կենցաղավարության պայմաններում գեղջկական համառ անշարժության, հնապաշտության և ոռոտինայի գեմ պայքարելու գենք:

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ

Այս պարապմունքի նպատակն է մատնանշել այն վասր, վոր հասցնում և կրոնը գյուղական կենցաղին Առանձնապես պետք է ընդգծել այն հանգամանքը, վոր կրոնագաղաքությունն ու առողջ կենցաղավարությունը անհամատեղելի յերկութներ են, վոր ինչքան ել ճգնեն աղանդավորները խարել գյուղացիներին կենցաղի առողջացման իրենց փորձերովը, նրանք այնուամենայնիվ շարունակում են մնալ կենցաղավարության առողջապահական պայմանների և գիտության խավարամոլ հակառակորդներ։ Անհրաժեշտ է մանրամասնորեն կանգ առնել այն ձեռնարկումների վրա, վոր կիրառում և Խորհրդային իշխանությունը գյուղացիության կենցաղի բարելավման գործում։ Հարկավոր և մատնանշել, վոր այդ բնագավառում, աղանդավորները Խորհրդային իշխանության թշնամիներն են հանդիսանում, քանի վոր գյուղացիության արթնացող գիտակությունն ուղղում են կրոնական հունով։ Հարկավոր են պարզաբանել վոր ժումկալ ու վայելուչ կենցաղավարության վերաբերյալ աղանդավորական բոլոր գրույցները սոսկ հրապուրիչ միջոցներ են գյուղական մասսային կուլակների ազդեցությանը յենթարկելու համար։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԴԵԿԱՎԱՐԻ ՀԱՄԱՐ

Լукачевский.— „Религия и новый быт“—տես „Безбожник“ թերթը, № 6 1926 թ. „Антирелигиоз-

նիկ“, հանդեսի 1927 թ. № 2-րդ գետեղված կոնսպիկուր—„Женщина и религия“.

Гурев— „Антирелигиозная хрестоматия“ 8-րդ գագին—„религия и нравственность“.

ԽՄԲԱԿԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

„Крестьянский антирелигиозный учебник“, 12-րդ գրաբապմունքը:

Степанов—„Мысли о религии“, 5-րդ, 6-րդ և 7-րդ կետերը:

Невский—„Праздники христианские и рабочекрестьянские“.

Горев—„Илья пророк“—հրատ. „Безбожник“-ի:

13.ՐԴ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

Անասվածների սփությունը յեվ նրա խնդիրները գյուղում կատարելիք հակարգենական աւատաբանի բնագավառում

Անաստվածների միությունը վորպես բոլոր աշխատավորներին իր մեջ համախմբող և կրոնի դեմ գիտակցարար պայքար մզող մի կամավոր հասարակական կազմակերպություն։ Անաստվածների միության (Ա.Մ.) դյուզում հետապնդելիք ինդիրներն են—հայտնաբերել կրօնի գասակարգային եյությունը, յեկեղեցական կազմակերպությունների գործունեյությունը, կը գոնի հակագիտական բնույթը և գյուղատնտեսության

ասպարիզում կատարած վնասակար դերը։ Անաստ-
վածների Միության մասնակցությունը գյուղի սոցիա-
լիստական շինարարության գործում։ Ովքե՛ր կարող
են անդամադրվել անաստվածների միությանը։ Անաստ-
վածների միության անդամների անդամակցական
պարտականությունները։ Անաստվածների միության
բջիջի կազմակերպումն ու աշխատանքը։ Գյուղում վա-
րելիք հակակրոնական պրոպագանդայի ձևերը։ Անաստ-
վածի աշխատանքը սեփական ընտանիքում։ Անհատա-
կան պրոպագանդան։ Ի՞նչպես կազմակերպել «Անաստ-
ված»-ի բարձրածայն ընթերցանությունը։ Ի՞նչպես
տանել հակակրոնական զրույցները։ Ի՞նչպես կազմա-
կերպել հակակրոնական յերեկո խրճիթ-ընթերցարան-
ներում։ Անաստվածների խմբակ։ Սրա և գյուղատնտե-
սական խմբակի աշխատանքների շաղկապումը։ Հակա-
կրոնական պրոպագանդան պատի լրագրերում։ Ան-
աստվածների միության բջիջի աշխատանքը նոր կեն-
ցաղի արմատները խորացնելու գործում։ Հակակրոնա-
կան եքսկուրսիաների կազմակերպություն։ Անաստված-
ների միության բջիջի մասնակցությունը խրճիթ-ըն-
թերցարանի աշխատանքներին։ Ի՞նչ պետք ե անի Ան-
աստվածների միության բջիջը կրոնական մեծ տոնե-
րի որերին։ Անաստվածների միության բջիջի ակնա-
ռու պրոպագանդան անտեսավարության նոր ձևերին
անցնելու խնդրում, — աջակցել ցուցադրական դաշտերի,
սերմազտիչ կայանների և գյուղատնտեսական ցուցա-
հանդեսների կազմակերպման գործին։ Աջակցել կոռպե-
րատիմների և գյուղական այլ հասարակական կազմա-
կերպությունների աշխատանքին։ Անաստվածների մի-
ության բջիջի գործնական ձեռնարկումները՝ ջրհորնե-

րի և կամուրջների նորոգություն, հասարակական-
փոխոգնություն, գյուղական լուսավորության աջակ-
ցություն։

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ

Այս պարապմունքի նպատակն ե ծանոթանալ
Անաստվածների միության խնդիրներին և գյուղառում
մղելիք հակակրոնական պրոպագանդայի մեթոդներին։
Անհրաժեշտ ե առանձնապես ընդգծել վոր հակակրո-
նական պրոպագանդան չպետք ե տարվի վերացական
նյութերի շուրջ, այլ կապակցվի գյուղի սոցիալիստա-
կան շինարարության խնդիրներին, գյուղատնտեսու-
թյան բարձրացման գործում Խորհրդային իշխանու-
թյան մարմինների կողմից կատարվող աշխատանքներն,
կոռպերացիայի ամրացմանը և գյուղացիական մասսա-
ների կուլտուրական մակարդակի բարձրացմանը։ Պետք
ե մատնանշել, վոր Անաստվածների միությունն այն
ժամանակ միայն հաստատուն հաջողություն ձեռք կը
բերի, յերբ համերաշխորեն հանդես կգա գյուղի մյուս
հասարակական կազմակերպությունների հետ, յերբ կը
կարողանա մուծել հակակրոնական պրոպագանդայի
տարբերը խրճիթ-ընթերցարանի, դպրոցի և կոռպե-
րացիայի աշխատանքի մեջ։ Հարկավոր ե առանձնա-
պես հանձնարարել, վոր գյուղական անաստվածներն
ազիտացիայի ակնառու մեթոդներ կիրառեն, այսինքն
անտեսավարության լավագույն ձևերի անցնելով՝ բար-
վոքեն սեփական տնտեսությունները և մասնակցին
կոռպերացիային ու ցուցադրական ցանքների կազմա-
կերպման գործին։

ԴՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԴԵԿԱԴԱՐԻ ՀԱՄԱՐ

Ярославский—„Новый устав СБ“, *шкн „Антирелигиозник“-ի 1926թ. № 7-ում գետեղած հոդվածը:*
 Сарабъянов—„Крестьянство и антирелигиозная пропаганда“, *шкн „Антирелигиозник“ № 1 1926թ.:*

Лукачевский—„СБ и методы антирелигиозной пропаганды“, *шкн „Антирелигиозник“-ի 1927թվի № 5-ում գետեղած կոնսիլիում:*

Ковалев—„Уголок безбожников“, *шкн „Антирелигиозник“-ի 1926թ. № 3-ում գետեղած հոդվածը,* „Стенная газета на антерелигозном фронте“ *шкн „Антирелигиозник“ № 9, 1926թ.:*


ԽՄԲԱԿԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ


„Крестьянский антирелигиозный учебник“ *13-րդ պարբռմունքը:*

Устав СБ, *шкн „Антирелигиозник“, № 7 1926թ.:*

„Инструкция по организации и работе сельячейки СБ“, *шкн „Антирелигиозник“, № 9, 1926թ.:*

Логинов—“Безбожник-лучший друг мужика”.





ՀՀ Ազգային գրադարան



NL0158363

